ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

N 124

«08» դեկտեմբերի - 2014թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.

Կից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ին կայացած թիվ 12 նիստի որոշումները:

Առդիր՝ « 5 » թերթ:

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ---------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112-61/13927-14
08 12 2014 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## ԱՎԱԳԱՆՈՒ

---

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 57-Ա

«28» նոյեմբերի - 2014թ. թիվ 12 նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 12 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Գրիգորյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Խ. Տերտերյան | ---------------- | ---------------- | ---------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ---------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի նոյեմբերի «28»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ $11^{00}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի նոյեմբերի 28-ի
թիվ 12 նիստի N 57-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1/ Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 12 նիստի օրակարգը հաստատելու մասին.

2/ 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին.

3/ Դրամական օգնություն հատկացնելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 58 -Ն

«28» նոյեմբերի 2014թ. — թիվ 12 նիստ

## 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Ա. Գրիգորյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | ---------------- | ---------------- | ---------------- |
| Խ. Տերտերյան | ---------------- | ---------------- | ---------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ---------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014 թվականի նոյեմբերի «28»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 $^{30}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի նոյեմբերի 28 -ի
թիվ 12 նիստի N 58-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ

1/ եկամուտների մասով՝ 25121300 դրամ.

2/ ծախսերի մասով՝ 25121300 դրամ.

3/ Տարեսկզբի մնացորդ՝ 0 դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի կից աղյուսակով:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Հաստատել տարեվերջի հավելուրդը կամ պակասուրդը /դեֆիցիտը/: Հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 4-ի և հատված 5-ի:

6 Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

7. Համաձայնություն տալ Լուսագյուղի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման ընթացքում գյուղապետի կողմից գործառական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելուն:

8. Լուսագյուղի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման մեջ փոփոխություններ կատարելու համար սահմանել 30 % չափաքանակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ 59-Ա

«28» նոյեմբերի 2014թ. — թիվ 12 արտահերթ նիստ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով գյուղապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքի բնակիչ՝ Վարոս Կիրակոսյանի տան հրդեհի հետևանքով պատճառված վնասը փոխհատուցելու նպատակով տալ դրամական օգնություն՝ 10000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա.Գրիգորյան | ------------------ | ------------------ | ---------------- |
| Գ. Սարգսյան | ------------------ | ------------------ | ---------------- |
| Խ.Տերտերյան | ------------------ | ------------------ | ---------------- |

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ------------------ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2014թվականի նոյեմբերի «28»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ $12^{00}$